Հետազոտական
Աշխատանք
Թեմա Ուսուցիչների առարկայական
և մասնագիտական
գիտելիքների և հմտությունների
կատարելագործումը
ստեղծագործական և հետազոտական
աշխատանքների ընթացքում
Ղեկավար՝ Վ. Սարգսյան
Ուսուցիչ՝ Ա. Պողոսյան
Երևան 2022թ.

Ուսուցիչների առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում:

**1.Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի հիմնավորում, արդիականություն /գրականության վերլուծությամբ/**

<<Հանրակրթության մասին օրենքի Գլուխ 5 Հոդված 27, Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները՝ կետ 5-ում ասվում է առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները հետևողականորեն կատարելագործելու, ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտության մասին>>: Սա նշանակում է, որ եթե ուսուցիչը խուսափի այդ աշխատանքներից և կատարելագործման ուղով չգնա, ապա մեծապես թերացած կլինի իր պարտականությունների կատարման հարցում: Որպեսզի ուսուցիչը կարողանա համաքայլ արձագանքել կրթության աճող պահանջներին, ստիպված է գնալ ինքնակատարելագործման ուղիով՝ երեխաների ուսուցումն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Քանի որ նոր կրթական ծրագրի համաձայն տարրական դասարաններում նախատեսվում են նախագծային աշխատանքներ, ապա այդ գործում աշակերտին աջակցելու համար ուսուցիչը ինքը պետք է գաղափար ունենա թե ինչ է հետազոտական գործունեությունը:

Ըստ հոգեբանների, ստեղծագործական և հետազոտական աշխատանքները նպաստում են ուսուցիչների կատարելագործմանը և բազմաթիվ նոր գաղափարների և նորամուծությունների հնարավորություն ստեղծում:

**2. Հետազոտության նպատակ.**

Գտնել ուսուցչի մասնագիտական և առարկայական գիտելիքների և հմտությունների կատարելագործման եղանակներ

**3.Հետազոտական խնդիրներ կամ հարցեր**

●Որոնք՞ են ուսուցիչների ստեղծագործական առաջընթացի և կատարելագործման ուղիները

●ՈՒսուցչի որ՞ հմտություններն են նպաստում երեխաների մոտ արժեքային համակարգի ձևավորմանը

●Ինչ՞ դեր ունեն սխալները ուսումնառության գործընթացում

**4.Վարկած՝ առկայության դեպքում**

Կա վարկած, որ ուսուցիչը ձեռնամուխ է լինում հետազոտական գործունեությանը ինքնակատարելագործվելու նպատակով

**5.Գրականության վերլուծություն**

●Որոնք են ուսուցիչների ստեղծագործական առաջընթացի և կատարելագործման ուղիները

Միայնակ մեծ հաջողությունների հասնել հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ է ընտրել համագործակցության ճանապարհը:Հանրակրթության մասին օրենքը խրախուսում է ուսուցիչների համագործակցությունը սեմինարներին և գիտաժողովներին:Իսկ

օրենքի՝ ուսուցիչների գործառույթներին վերաբերող բաժնում ասված է, որ ուսուցիչը մասնակցում է մեթոդ միավորումների աշխատանքներին, համագործակցում է գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով:
Մասնագիտական զարգացման միջոց է համարվում ուսուցիչների համագործակցությունը դպրոցների ներսում:Սակայն քանի որ հայաստանյան դպրոցներում շախմատի ուսուցիչները մեկ կամ երկու հոգի են, ապա առարկայական որակների զարգացման համար կարևորվում է համագործակցությունը տարբեր դպրոցների շախմատի ուսուցիչների միջև:Մասնագիտական առաջընթացի համար պակաս կարևոր նշանակություն չունեն ուսուցիչների փոխադարձ այցելություններն ու դասալսումները:Մասնագիտական առաջընթացին թափ կարող է հաղորդել նաև միջազգային առաջավոր փորձի հետ ծանոթանալը:
Միջուսուցչական կապերը հնարավորություն են ընձեռնում դասավանդման առավել արդյունավետ ձևեր և մեթոդներ մշակել:
Ի դեպ, հետազոտությունը, որը համատեղ քննարկումների, հարցազրույցների արդյունք է, ևս կարելի է համագործակցություն որակել:
Հետազոտական աշխատանքների ճանապարհին գնալով մեծանում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը:Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը լայն հնարավորություններ է ստեղծում ինչպես ստեղծագործական նորարարությունների, այնպես էլ ուսումնառության գործընթացի արդիականացման առումով:
Տարբեր ուսումնաօժանդակ նյութերի և աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստեղծագործական և հետազոտական աշխատանքների կատարումը ուսուցիչների մոտ ինքնակատարելագործվելու մոտիվացիա է առաջացնում, ինչը համահունչ է փորձագիտական այն եզրակացությանը, որ ուսումնառությունը բերում է մոտիվացիայի:
●Ուսուցչի որ՞ հմտություններն են նպաստում երեխայի մոտ արժեքային համակարգի ձևավորմանը
Հմտությունների և գիտելիքների ձևավորումը ինքնանպատակ է, եթե չի ծառայեցվում երեխաների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:
<<Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշիչներում որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ>>,- գրում է ուսուցչուհի Հ. Մելիքյանը իր <<Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում>> հետազոտական աշխատանքի մեջ:
Հայրենասիրության թեման արծարծելիս սովորաբար բերում եմ հրամանատարին կորցրած քաջարի մարտիկի օրինակը, ով իր ձեռքն է վերցնում մարտը վարելու ղեկը:Զուգահեռներ է անցկացվում <<ինքնազոհ նավակ>> թեմայի հետ:Այդպիսով համեմատություններ անելու հմտության միջոցով փորձ եմ անում հայրենասիրություն սերմանել երեխաների մեջ:

Երբ դասարանի աշակերտներից մեկը փորձում է իր մեղքը բարդել դասընկերոջ վրա, փորձում եմ դարձի բերել նրան,իսկ մեղքի խոստովանության փաստը խրախուսում եմ՝ այդպիսով երեխաների մեջ ձևավորելով երկու արժեք. արդարություն և ազնվություն։Երեխաների հետ հաղորդակցվելու հմտությունը այստեղ համատեղվեց խրախուսման հմտության հետ։
Երբ թիմային մրցույթից առաջ խմբերում ընդգրկված երեխաների հետ պայման եմ կապում, որ մրցույթից դուրս է մնալու այն թիմը,որի անդամներից մեկը անգործ մնա, ապա երեխաների մեջ թիմակիցների հանդեպ պատասխանատվության զգացում է արթնանում։Այստեղ դեր խաղաց ուսուցչի պայմանավորվելու արվեստը, որը սակայն, հաղորդակցվելու արվեստի ենթատեսակ է։
Անհրաժեշտ է հավասար իրավունքներ և հնարավորություններ ընձեռնել անխտիր բոլոր աշակերտներին՝ դրանով փորձելով խթանել իրավահավասարության գաղափարի արմատավորումը երեխաների գիտակցության մեջ։Այստեղ,թեևրս, դասը կառավարելու հմտությունն է բանեցվում։
Երեխաներին դաստիարակելու գործում հաճախ մեծ նշանակություն է ունենում ուսուցչի՝ աձնական օրինակով երեխաներին խանդավառելու երևույթը։
●Ինչ՞ դեր ունեն սխալները ուսումնառության գործընթացում
Դասի ժամանակ աշակերտներին մշտապես հորդորում եմ չվախենալ սխալվելուց և ակտիվորեն մասնակցել հարցուպատասխանների գործընթացին։Յուրաքանչյուր երեխա ունի սխալվելու իրավունք, և այդ իրավունքից <<օգտվելու>> դեպքում երեխան չպետք է արժանանա քննադատության։Հոգեբանները խորհուրդ չեն տալիս երեխայի ներկայությամբ բարձրաձայնել թե՛ ներկա, թե՛ նախկին սխալների մասին։Ընդհակառակը, անհրաժեշտ է խրախուսել երեխայի պատրաստակամությունը լուծումներ գտնելու հարցում։ Իսկ խրախուսումից հետո ուղղորդող հարցերի միջոցով երեխային բերում հանգեցնում ենք ճիշտ պատասխանին։Չէ որ սխալների միջոցով ուղի ենք հարթում դեպի ճշմարտության բացահայտում։Սխալները, օգնելով գտնել մեր թույլ կողմերը, նախադրյալներ են ստեղծում վերելքի և կատարելագործման համար։
Կարծում ենք, այն պահից սկսած, երբ մարդկությունը գիտակցեց սխալների օգտակարությունը, սկիզբ դրվեց <<միտումնավոր սխալների>> պրակտիկային։Մի պրակտիկա, որը բազմիցս կիրառել եմ դասապրոցեսների ընթացքում։Միտումնավոր անճշտություններ եմ թույլ տալիս թե՛ դիրքերը շարելիս, թե՛ քայլերը կատարելիս՝ հուսալով, որ երեխաները կնկատեն և հաճույքով կուղղեն իմ <<սխալները>>։
Արժե հաշվի առնել նաև անվանի շախմատիստների փորձը՝ երբ դիրքը պահանջում է պարզ և հասարակ լուծումներ, իսկ նրանք, ինչ-ինչ նկատառումներով գնում են <<չտրորված արահետներով>>;Ինչպես նշված է Յակով Դամսկու <<Գրոհի բովում>>գրքում, շախմատի աշխարհի 8-րդ չեմպիոն Միխայիլ Տալը իր մարզիչ Կոբլենցի խորհրդով երբեմն թույլ շարունակություններ էր ընտրում՝ պաշտպանվելու արվեստը յուրացնելու նպատակով։Ի դեպ, մարզիչները խորհուրդ չեն տալիս խաղալ առանց պլանի, թեկուզև այն սխալ լինի։Սխալները ուսուցանում են թե ինչպես չպետք

է գործել, թե ինչը չի կարելի անել։Սա հիշեցնում է մաթեմատիկական դեդուկցիայի օրենքը, երբ բացառելով սխալները հանգում ենք ճշմարիտ տարբերակին։Այս համատեքստում կարելի է դիտարկել բացառման մեթոդը,քայլի հերթի փոփոխման մեթոդը, քայլերի ընտրության մեթոդը և այլ մեթոդներ, որոնք տեղ են գտել առաջադրանքների լուծման  բոլոր այդ մեթոդների հեղինակ Սամվել Միսակյանի <<Շախմատ, 2-4-րդ դասարաններ>> ուսումնամեթոդական ձեռնարկում։
Նույն նպատակին են ծառայում <<օգնական մատ>>, <<սխալների ուղղում>> թեմաները, որոնք բարդ լինելու պատճառով չընդգրկվեցին նոր ուսումնական ծրագրերում։

**6.Էմպիրիկ հետազոտություն**

Անցկացվել է հարցազրույց Հայաստանի 10 դասավանդող շախմատի ուսուցիչների հետ։Հարցման նպատակն էր պարզել, թե ուսուցիչները որքանով են պատրաստ հարստացնելու իրենց գիտելիքները և հմտությունները։Հարցազրույցները նպատակ ունեին նաև պարզելու հետազոտական գործունեության ազդեցությունը ուսուցիչների մասնագիտական կարողությունների վրա։

**Հարցազրույցների հարցեր**

1.Հետազոտական աշխատանքի միջոցով ուսուցչի որ՞ հմտություններն են զարգանում

Եթե մեկ նախադասությամբ ձևակերպելու լինենք պատասխանների արդյունքները , ապա կստանանք այսպիսի պատկեր. հետազոտական աշխատանքի արդյունքում զարգանում են գործողությունների պլանավորման, երևույթները համեմատելու, գնահատելու, վերլուծելու և համադրելու, մտքերը հստակ ձևակերպելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, ստեղծագործելու հմտությունները։

2. Ինչն՞ է ձեզ մոտիվացնում, որ կատարեք ստեղծագործական աշխատանք

Շատ ուսուցիչներ որպես մոտիվացնող գործոն են մատնանշել ինքնակատարելագործումը։Իսկ մի շարք ուսուցիչներ էլ ուսումնական գործընթացը ավելի հետաքրքիր դարձնելու համար կարևորել  են նոր մեթոդների, հնարքների, թեմաների մշակումը։Նորարարական մոտեցումները, կարծում ենք, նույնպես կարելի է որակել իբրև ինքնակատարելագործման դրսևորում։Հարցվող ուսուցիչներից մեկն էլ որպես մոտիվացնող գործոն է համարել իր սաների և աշակերտների ստեղծագործական առաջընթացը։

3.Մասնագիտական կատարելագործման ինչ՞ քայլեր եք ձեռնարկում

Այս հարցի շուրջ հնչած պատասխանները պայմանականորեն կարելի է բաշխել երեք խմբերի միջև

●Ինքնակրթություն
●Սեմինարներ
●Համագործակցություն

**Ինքնակրթություն**

Մասնագիտական և վերլուծական գրականություն(գրքեր, ամսագրեր, թերթեր), համացանցի նյութեր, եթեր, մամուլ, հետազոտական և ստեղծագործական գործունեություն, հեղինակային նյութերի հրապարակում մամուլի էջերում

**Համագործակցություն**

●Միջառարկայական համագործակցություն դպրոց(ներ)ի ուսուցիչների միջև

●Փոխայցելություններ տարբեր դպրոցների ուսուցիչների միջև՝ փոխադարձ դասալսումների և համատեղ քննարկումների նպատակով

**Սեմինարներ**

Սեմինարներ, գիտաժողովներ, խորհրդակցություններ, վերապատրաստման դասընթացներ, ատեստավորում

4.Մարդկային ինչ՞ որակներ է խթանում հետազոտական աշխատանքը

Ըստ հարցվողների՝ զարգացնում է հետևյալ որակները.

Կամք, պատասխանատվություն, նպատակասլացություն, աշխատասիրություն, անաչառություն, համբերատարություն, հաստատակամություն, համառություն

5.Ուսուցչի կատարելագործման առումով ինչ՞ առավելություններ ունի հետազոտական աշխատանքը ստեղծագործական գործունեության մյուս տեսակների համեմատ

Եթե ընդհանրացնելու լինենք տեսակետների ամբողջությունը, ապա կտեսնենք, որ հետազոտական գործունեությունը կայուն, մնայուն, հիմնարար, երկարաժամկետ օգտագործման համար պիտանի գիտելիքների աղբյուր է հանդիսանում

6.Որն՞ է այն ամենակարևոր ստեղծագործական ձեռքբերումը, որ ունեցաք հետազոտական աշխատանքի արդյունքում

ՈՒսուցիչների պատասխանները խորիմաստ և բազմազան էին (երեխաների կրթական կարիքը հստակորեն բացահայտելու և սահմանելու հմտություն, ինքնակրթություն՝ որպես ստեղծագործական և առարկայական գիտելիքների ձեռքբերմանը նպաստող երևույթ, կրտսեր տարիքային խմբի երեխաների հետ աշխատելու հմտություններ)։ Սակայն շրջանառվող առանցքային գաղափարը այն էր, որ հարցվողների զգալի մասը իրենց բացահայտեցին հետազոտող ուսուցչի դերում։Պարզվեց, որ հետազոտողի ջիղը այս կամ այն չափով առկա է գրեթե բոլոր հետազոտողների մոտ։

7.Ինչ՞ տվեց ձեզ այս հետազոտությունը ինքնաճանաչողության առումով

Ինքնաճանաչողությունը առավել հաճախ ընկալվում է որպես սեփական թերությունները բացահայտելու ճանապարհ։Մինչդեռ հարցման մասնակիցների մեծ մասը նշեցին իրենց մեջ թաքնված հնարավորությունների ընդունակությունների, մեծ ներուժի, մեծ կարողությունների բացահայտման մասին՝ չմոռանալով ավելացնել, որ ինքնակատարելագործումը անվերջանալի գործընթաց է։

8.Համագործակցության ինչ՞ ձևեր պետք է կիրառել, որպեսզի հետազոտությունը արգասաբեր լինի ուսուցչի հետագա մասնագիտական գործունեության համար

Իբրև համագործակցության առանցքային ձև նշվեց փորձի փոխանակումը՝ իր բոլոր դրսևորումներով. սեմինար խորհրդակցություններ, ուսուցիչների միջառարկայական կապերի ամրապնդում և ընդլայնում։Սակայն ուսուցիչների մասնագիտական

որակների բարելավման ամենաազդեցիկ և գործուն միջոց համարվեց դասալսումը՝ լինի դա գործընկերների փոխայցելությունների տեսքով, թե հանրակրթության համակարգի փորձագետների ստուգայցների տեսքով։Դասալսումը կարևոր է այն իմաստով, որ պրակտիկ մթնոլորտում է հղկվում ուսուցչի աշխատանքային հմտությունը՝ մանավանդ դասալսումներից հետո ծավալվող քննարկումների, բանավեճերի համապատկերին։
Այսպիսով, ուսուցիչների մոտ հակվածություն կա համագործակցությամբ ամրապնդել հետազոտության շնորհիվ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները։Առկա է դասավանդման նոր մոտեցումներ ձեռք բերելու ձգտում՝ այդ նպատակի համար օգտագործելով բազում ձևեր և միջոցներ։
Ուսուցիչները ամենատարբեր եղանակներով փորձում են հարստացնել իրենց գիտելիքներն ու զարգացնել հմտությունները։
Հարցվածների մեծ մասը պատկերացում ունի թե ինչ է հետազոտական աշխատանքը, իսկ նրանցից ոմանք  իրենց արդեն զգում են հետազոտողի կարգավիճակում ։Հետազոտական աշխատանքը տալիս է կայուն և հիմնարար գիտելիքներ, բարենպաստ ազդեցություն է թողնում ինչպես մասնագիտական, այնպես էլ մարդկային որակների վրա։Հետազոտությունը նպաստում է ինքնակատարելագործմանը։Հետազոտության արդյունքում ուսուցիչները բացահայտեցին իրենց թաքնված ներուժը։

## Եզրակացություն

Ուսուցիչները պատրաստակամություն են դրսևորում հարստացնել գիտելիքների պաշարն ու կատարելագործել  հմտությունները։Հետազոտական գործունեությունը բարենպաստ ազդեցություն է թողնում ուսուցիչների մասնագիտական կարողությունների վրա։